

Ինչպէս յիշուեցաւ, Ս. Աստուածածնի եկեղեցիին մէջ, թէ՛ բիւզանդական և թէ՛ Խաչակրաց շրջաններուն Երուսաղէմի բոլոր քրիստոնէայ համայնքները պաշտամունք կը կատարէին. աշարական տիրապետութեան տակ ևս նոյնը կը շարունակուէր. թէև Սալահէտտինի յաղթութենէն յետոյ, 1187ին լատին պատրիարքը իր բոլոր կղերովը ստիպուեցաւ Երուսաղէմէն հեռանալ, բայց ժամանակ վերջը զարձեալ Ս. Տեղեաց մէջ հաստատուելով նոյն սրբավայրին մէջ, ինչպէս կը յիշէ պատմութիւնը, զրկուած չէր կրօնական պաշտամունքներէ: Նոյն տաճարին սեպհականատիրութիւնը մեր ձեռագրաց յիշատակարաններէն յայտնի կ'ըլլայ որ, մանաւանդ Սալահէտտինի յաղթութենէն վերջ, պարզապէս Հայոց ձեռքը մնացած է. թէև այդ մասին ալ վէճեր չեն պակասած. հետեւեալ պատմական պարագաները կը հաստատեն գայդ.

1. Կարապէտ վրդ. Երուսաղէմացի՝ 1230ին տեսնելով որ Գեթսեմանիի եկեղեցին անձրևները խիճերով, քարերով և հողով լեցուցած են, այնպէս որ միայն Ս. Կուսին Գերեզմանը կ'երևէր, մաքրել կու տայ մշակներուն, փակել կու տայ տեղւոյն խորշերը և բաւիղները, զոր աամիկները դրունք դժոխոց կը կոչէին:

2. Մարտիրոս Պարտիարք Եգիպտացի՝ 1421ին կը նորոգէ Գեթսեմանիի Ս. Աստուածածին եկեղեցին, անոր յատուկ ու տանիքը կը յարգարէ սալով. ըստ Հաննէ վրդ.ի պատմութեան (էջ 272), անոր յիշատակարանը զրուած է եկեղեցիին դրօի մեծ դըրան աջակողմը, հետեւալ կերպով. «Ի Հայոց բուսակալիկն ԲՃՃ (= 1421), եւ Տր. Մարտիրոս Արքեպիսկոպոս Երուսաղէմի, վասն բազում ջուրցն որ լցուի յեկեղեցին, սալ կապեցի, զեղն և զսեկիսն շինեցի: Յիշման առեկի զիս արժակի, և յիշողացոյ տն. ողորմի»: Բայց այդ արձանագրութիւնը չ'երևիր այժմ, վասն զի տաճարի դրան փառաւոր կամարը քարերով հիւսուած է և մուտքը նեղցուցած են, ուստի նոյն արձանագրութիւնը կամ ջնջուեցաւ և կամ քարերու տակ ծածկուեցաւ: Այս առթիւ պէտք է յիշել թէ Հաննէ (էջ 272) սա տեղեկութիւնն ալ կու տայ. «Այս փառաւոր Ս. Եկեղեցիս՝ յասուկ եր սագիս Հայոց, որպիս ի յորմնս եկեղեցոյն երեւին յիշասակարանի ճորդողացն և բուսակալի երկարագիրք, որ ըսիկն յուսարս զգարեցաւ յայն պատճառե, և կուսուաւ եղծեաց գաղտ յուսեկի գգիսն»: Մարտիրոս պարտիարքին նախորդը, Պողոս Գառնեցի (յետոյ կաթողիկոս), 1413ին կը գնէ Գեթսեմանիի ձի-